ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ԽՈՍՔԸ ՈՒՂՂՎԱԾ ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ ՈՐՊԵՍ ՆՈՐ ՏԱՐՎԱ ՄԱՂԹԱՆՔ

(Առնված ձայնապնակի վրա)

Ողջո՛ւյն ձեզ, պանդուխտ որդիք հայոց, որ բախտն զձեզ Հայրենի աշխարհից վարել տարել է մինչև Ամերիկա:

Ողջո՛ւյն ձեզ Արարատյան աշխարհեն, Մասյաց Նոյան տապանեն, Էջմիածնա Ս. Տաճարեն:

Ողջո՛ւյն Ձեզ Հայոց Հայրիկեն: Ո՛ տայր ինձ, որ ավետիս տայի ձեզ իբրև Նոյան աղավնին, թե ցամաքեցավ ջրհեղեղ, դարձե՛ք ձեր Հայրենի աշխարհ: Սիրտ առե՛ք, քաջալերվեցե՛ք, անբախտ և բախտավոր պանդուխտ որդիք Հայոց, Աստուծո այցելություն մոտ է մեր շարշարյալ աշխարհին:

Ողջո՛ւյն տվեք նաև մեծ հնարիշ էդիսոնին, որ իմ կենդանի ձայնը առավ բերավ ձեզ. կեցցե՛ հավերժ ինք և յուր գյուտի հիշատակը:

Կշնորհավորեմ ձեր մուտ ի նոր տարին, կյանք և հաջողություն մաղթելով ձեզ ամենեցուն:

ՀԱՅՐԻԿ

1895 հունվար,
Էջմիածին